ԱՆՁՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՆՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ «ՄԵԾ ՀՆԳՅԱԿ» ԵՎ «ՄՈՒԹ ԵՌՅԱԿ» ՄՈԴԵԼՆԵՐՈՒՄ

ԱՍՏՂԻԿ ՍԵՐՈԲՅԱՆ

Մեծ հնգյակը (անգլ.՝ OCEAN) անձնային գծերի դասակարգման ժամանակակից ամենատարածված ու հայտնի մոտեցումներից է: Սակայն այն նաև որոշ չափով քննադատվում է, քանի որ նկարագրում է անձի դրական կողմերը՝ լիովին չընդգրկելով բացասական, մութ, հակասոցիալական դրսևորումները: Այդ է պատճառը, որ այժմ մեծ արագությամբ զարգանում է անձի բացասական կողմերը ներկայացնող «Մութ եռյակ» (անգլ.՝ Dark Triad) մոդելը: Հոդվածի նպատակն է բացահայտել, թե ինչպես են անձնային գծերը պայմանավորում «Մութ եռյակի» գործոնների արտահայտվածությունը: Գծային ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ «Մութ եռյակի» գծերից մաքիավելիզմի համար դրական կանխորոշիչ գործոններ են տվյալ մոդելի մյուս երկու գծերը՝ փսիխոպաթիան ու նարցիսիզմը, իսկ «Մեծ հնգյակի» գծերից՝ բարյացակամությունը: Մաքիավելիզմն իր հերթին պայմանավորում է նարցիսիզմի ու փսիխոպաթիայի արտահայտվածությունը: Ինչ վերաբերում է «Մեծ հնգյակի» գծերին, ապա նարցիսիզմի համար դրական կանխորոշիչ գործոններ են նեյրոտիզմը, էքստրավերտությունը և լայնախոհությունը, իսկ փսիխոպաթիայի համար՝ նեյրոտիզմն ու բարյացակամությունը:

Անձնային գծերի տեսության ներկայացուցիչները կարծում են, որ գծերն ու վարքն ունեն հիերարխիկ կառուցվածք, և անընդհատ փորձում են գտնել դասակարգման մի ընդհանուր համակարգ, որը բազմահազար անձնային բնութագրերը կխմբավորի ըստ ոլորտների[1]: Երկարատև հետազոտություններն ի վերջո հանգեցրին նրան, որ ոլորտում տիրեց հարաբերական համաձայնություն՝ բացահայտելով անձնային գծերի դասակարգման համընդհանուր համակարգ՝ «Մեծ հնգյակը»[2]:

Հիմնվելով հոգելեզվաբանական մոտեցման[3] և գործոնային վերլու-

---

[1] Տե՛ս **Первин Л., Джон О**. Психология личности: теория и исследования. М.: Аспект Пресс, 2001, էջ 255-258:

[2] Տե՛ս **McCrae R., Costa P.** Updating Norman's "adequacy taxonomy": Intelligence and personality in dimensions in natural language and in questionnaires. Journal of Personality and Social Psychology, 49, 1985, էջ 710-721:

[3] Տե՛ս **Goldberg L.** The development of markers for the Big-Five factor model. Psycho-

ծության մեթոդի վրա՝ հետազոտողները եզրակացրին, որ անձը կարելի է նկարագրել հինգ հիմնական գծերի միջոցով, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է անձի մեկ կարևորագույն հատկանիշ, որը դրսևորվում է նրա գործունեության մեջ և մարդկանց հետ շփման ընթացքում[4]: Հինգգործոնային մոդելը դիտվում է անհատի հուզական, կոգնիտիվ, դրդապատճառային բազային ոճերի, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների կառուցման անհատական ոճերի ուսումնասիրման գործիք[5]: Հինգ հիմնական գծերն են նեյրոտիզմը (անգլ.՝ Neurotism), էքստրավերտությունը (անգլ.՝ Extraversion), լայնախոհությունը (բացություն փորձին) (անգլ.՝ Openness), բարյացակամությունը (անգլ.՝ Agreeableness), բարեխղճությունը (անգլ.՝ Conscientiousness), որոնք կայուն են ժամանակի մեջ, անկախ են իրավիճակից, և դրանց միջոցով հնարավոր է համակողմանի նկարագրել մարդուն[6]:

Նեյրոտիզմը բնութագրում է բացասական հույզերին հակվածությունը: Նեյրոտիզմի բարձր ցուցանիշներով մարդկանց շրջանում գերակայում է հիմնականում մեկ բացասական հույզ, օրինակ՝ զայրույթ, տագնապ կամ դեպրեսիա, բայց ավելի հավանական է, որ այս հույզերից մի քանիսը միաժամանակ արտահայտված լինեն:

Նեյրոտիզմի ցածր ցուցանիշներով անհատները ավելի ուշ են հուսահատվում և հուզականորեն պակաս արձագանքող են: Նրանք հակված են լինելու հանգիստ, հուզականորեն կայուն և չունեն տևական բացասական հույզեր: Բացասական հույզեր չունենալը չի նշանակում, որ նեյրոտիզմի ցածր ցուցանիշներով անհատները մշտապես ապրում են դրական հույզեր. դրական հույզերի հաճախականությունը պայմանավորված է էքստրավերսիայի գործոնով[7]:

Էքստրավերտությունը բնութագրում է արտաքին աշխարհի հետ հարաբերություններում ներգրավվածության աստիճանը: Էքստրավերտները սիրում են լինել մարդկանց միջավայրում, լի են էներգիայով և հաճախ են ունենում դրական հույզեր: Նախաձեռնող են, գործունյա, բաց չեն թողնում զվարճանալու հնարավորությունը: Մարդկանց շրջապատում նրանք սիրում են խոսել, դրսևորել իրենց, ուշադրություն հրավիրել իրենց նկատմամբ[8]: Ինտրավերտները (էքստրավերտության

---

logical Asessment 4 (1), 1992, էջ 26-42:

[4] Տե՛ս **Ashton M., Lee C.** A theoretical basis for the major dimensions of personality. European journal of personality, 15, 2001, էջ 327-353:

[5] Տե՛ս **McCrae R., Costa P. Jr.** Empirical and theoretical status of the five-factor model of personality traits. In Boyle G., Matthews G. & Saklofske D. (eds) The SAGE Handbook of Personality Theory and Assessment: Volume 1 — Personality Theories and ModelsI, SAGE Publications Ltd, 2008, էջ 273-294:

[6] Տե՛ս **McCrae R., Costa P. Jr.** A five factor theory of personality. In O. John, L. Pervin (Eds.), Handbook of personality: Theory and research, 2nd ed. New York, NY: Guilford Press, 1999, էջ 139-153:

[7] Տե՛ս նույն տեղը, էջ 143-144:

[8] Տե՛ս **Watson D., Clark L.** Extravesion and its positive emotional core. In Hogan R.,

գործոնով ցածր միավորներ ունեցողները) ունեն էներգիայի, նախաձեռնողականության, ակտիվության պակաս արտահայտվածություն, քան էքստրավերտները: Նրանք ավելի հանգիստ են, աչքի չընկնող, ինքնավերլուծող, սոցիալական աշխարհից մեկուսացած[9]:

Լայնախոհությունը (բացություն փորձին) բնութագրում է մտածողության ոճը՝ տարբերակելով վառ երևակայություն ունեցող, կրեատիվ մարդկանց ավելի պրագմատիկ, պահպանողական մտածող անձերից: Լայնախոհ, բաց մարդիկ ունեն ճանաչողական/ինտելեկտուալ հետաքրքրասիրություն, սիրում են արվեստը և անտարբեր չեն գեղեցիկի նկատմամբ:

Լայնախոհության մեկ այլ հատկանիշ է կոնկրետ փորձից վերացարկված սիմվոլներով և աբստրակցիաներով տրամաբանելու ունակությունը: Կախված մտավոր կարողություններից՝ այս սիմվոլիկ ճանաչողությունը կարող է դրսևորվել մաթեմատիկական, տրամաբանական կամ երկրաչափական մտածողության, խոսքի պատկերավոր կամ մետաֆորիկ կիրառության, երաժշտություն հորինելու կամ կատարելու կամ արվեստի այլ ձևերում: Լայնախոհության գործոնի ցածր ցուցանիշներ ունեցող անձինք սովորաբար ունեն նեղ, սովորական հետաքրքրություններ: Նրանք նախընտրում են պարզը, դյուրինը և ակնհայտը բարդից, երկակիից և նրբաճաշակից: Նրանք կասկածով են վերաբերվում արվեստին և գիտությանը՝ դրանք համարելով անհասկանալի կամ ոչ կիրառական: Ոչ լայնախոհ անձինք նախընտրում են ծանոթը, հայտնին, պահպանողական են և չեն սիրում փոփոխություններ[10]:

«Բարյացակամություն» գործոնը ցույց է տալիս համագործակցության և համերաշխության անհատական տարբերությունները: Բարյացակամ անհատները կարևորում են հարմարվողականությունը: Նրանք նրբանկատ են, ընկերասեր, մեծահոգի, պատրաստ օգնելու և զիջելու: Բարյացակամ մարդիկ նաև լավատես են մարդկային բնույթի հարցում. նրանք հավատում են, որ մարդիկ հիմնականում անկեղծ են, բարոյական և վստահելի:

Այս գործոնի ցածր ցուցանիշներ ունեցող մարդիկ՝ անբարյացակամները, իրենց շահերը վեր են դասում մյուսների հետ հարմարվելու անհրաժեշտությունից: Նրանք սովորաբար անտարբեր են մյուսների բարեկեցության նկատմամբ և հետևաբար հակված չեն իրենց նեղություն տալու մյուսներին հարմարվելու համար: Երբեմն մարդկանց հան-

---

Johnson J., Briggs S (Eds.), Handbook of personality psychology, New York, Academic Press, 1997, էջ 767-793:

[9] Տե՛ս **Ա. Սերոբյան, Ն. Գրիգորյան,** Անձնային գծերը որպես ինքնակարգավորման վարքաձևերի ընտրության նախապայման, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 141.4, 2013, էջ 66-75:

[10] Տե՛ս **McCrae R.** Openness to experience as a basic dimension of personality. Imagination, cognition and personality, № 13, 1993-1994, էջ 39-55:

դեպ կասկածամտությունը նրանց ստիպում է զգուշավոր, անբարյացակամ և անհամագործակցող լինել[11]:

Բարեխղճության գործոնը ցույց է տալիս գործելուց առաջ հետևանքների մասին մտածելու ունակությունը: Բարեխղճությունը բնորոշվում է հեռահար նպատակներ դնելու, այդ նպատակներին հասնելու քայլերը ծրագրելու և դրանց իրականացմանը համառորեն հետամուտ լինելու կարողությամբ՝ չտրվելով կարճատև ազդակների ազդեցությանը: Բարեխղճության գործոնի բարձր ցուցանիշները նաև վկայում են անձի շրջահայացության մասին: Բարեխղճության գործոնի բարձր ցուցանիշներ ունեցող անհատները սովորաբար լուրջ խնդիրների մեջ չեն ընկնում և ունենում են նշանակալի ձեռքբերումներ՝ շնորհիվ նպատակային պլանավորման, շրջահայացության և համառության: Ուրիշները նրանց համարում են խելացի և հուսալի: Մյուս կողմից, նրանք կարող են ունենալ կատարելության հասնելու սևեռուն ձգտում և լինել աշխատամոլներ: Այս ծայրահեղ գիծը մարդուն դարձնում է ձանձրալի և անհետաքրքիր:

Բարեխղճության գործոնի ցածր ցուցանիշներով մարդիկ համարվում են անհուսալի, հավակնություններից զուրկ, անհաջողակ, բայց նրանք կյանքում ունենում են բազմաթիվ կարճատև հաճույքներ և մյուսների կողմից ընկալվում են որպես պայծառ, ուրախ և խենթ[12]:

Թեպետ անձնային գծերի հինգգործոնային մոդելը ամենատարածված ու հայտնի մոտեցումներից է անձի հոգեբանության մեջ, սակայն այն քննադատվում է: Ընդդիմախոսները կարծում են, որ այդ հինգ գործոնները բավական չեն անձին համակողմանի նկարագրելու համար[13], ինչպես նաև՝ հինգ գործոնները լիովին չեն ընդգրկում անձի բացասական, մութ, հակասոցիալական կողմերը: Այդ է պատճառը, որ այժմ արագորեն զարգանում է անձի հակասոցիալական գծերը ներկայացնող «Մութ եռյակ» մոդելը[14]:

Վերջինս համարվում է համեմատաբար նոր մոտեցում: Մոդելի հիմնական առանձնահատկությունն այն է, որ դիտարկվում են անձի բացասական, հակասոցիալական, մռայլ կողմերը՝ փսիխոպաթիան, նարցիսիզմը և մաքիավելիզմը: «Մութ եռյակի» երեք գծերը երկար տարիներ ուսումնասիրվել են առանձին-առանձին և վերաբերել են կլինիկական հոգեբանության կամ հոգեբուժության ոլորտին: 1998 թ. Ջ.

---

[11] Տե՛ս **McCrae R., Costa P. Jr.** A five factor theory of personality, էջ 143-144:

[12] Տե՛ս **Costa P., McCrae R**. Six approaches to the explication of facet-level traits: Examples from conscientiousness. European journal of personality, 12, 1998, էջ 117-134:

[13] Տե՛ս **Ashton M., Lee K.** Empirical, theoretical, and practical advantages of the HEXACO model of personality structure. Personality and Social Psychology Review, 11, 2007, էջ 150–166:

[14] Տե՛ս **Veselka L., Schermer J., Vernon P.** The Dark Triad and an expanded framework of personality. Personality and Individual Differences, 53(4), 2012, էջ 417-425: http://dx.doi.org/10.1016/j.paid.2012.01.002

Մաքիոսկին, Ու. Ուորզելը և Ք. Սզյարտոն հայտարարեցին, որ այս երեք գծերը նորմալ, ոչ կլինիկական ընտրանքների դեպքում միմյանց փոխարինում են. դա արժանացավ գիտական հանրության քննադատությանը[15]: Սակայն հետագայում Դ. Պոլհուսը և Կ. Ուիլյամսը իրենց հետազոտություններում գտան բավականաչափ ապացույցներ, որ փսիխոպաթիան, նարցիսիզմը և մաքիավելիզմը իրարից անկախ կառույցներ են, բայց հարկավոր են հետագա ուսումնասիրություններ՝ հասկանալու համար, թե որ դեպքերում են դրանք միմյանց փոխարինում, քանի որ հայտնաբերվել են դրական կոռելյացիոն կապեր նշված երեք գծերի միջև: Պոլհուսի և Ուիլյամսի շնորհիվ 2002 թ. «Մութ եռյակը» մտավ հոգեբանական եզրույթների ցանկի մեջ[16]:

Փսիխոպաթիան և նարցիսիզմը ի սկզբանե հանդիպել են կլինիկական հոգեբանության տեսության և պրակտիկայի ոլորտներում, ու երկուսն էլ անձնային խանգարումներ են «Հոգեկան խանգարումների ախտորոշիչ և վիճակագրական ձեռնարկի 4-րդ հրատարակության» վերնայված տարբերակում (անգլ.՝ DSM-IV-TR)[17]:

Փսիխոպաթիայի շատ ուսումնասիրություններ կատարվել են դատապարտյալների կամ հոգեկան շեղումներով օրինազանցների հետ: Սակայն առաջնային կամ երկրորդային փսիխոպաթիա ունեցողներից ոչ բոլորն են օրինազանցներ, հետևաբար անհրաժեշտություն առաջացավ այն ուսումնասիրել նաև սովորական մարդկանց ընդհանուր համախմբության շրջանում՝ փսիխոպաթիան դիտարկելով որպես անձնային գիծ[18], ինչի շնորհիվ էլ այն կարող է ձեռք բերել սոցիալական որոշակի առավելություն[19]: Հետագայում առանձնացրել են փսիխոպաթիայի ախտանիշային և մինչախտանիշային տեսակներ: Վերջինս ինչոր չափով դիտվում էր նաև որպես անձնային նորմալ գծերի շեշտադրում և չափվում էր, օրինակ՝ «Մեծ հնգյակի» հարցարանի միջոցով[20]: Փսիխոպաթիային բնորոշ են անպատասխանատվությունը, ապրումակցման պակասը, միջանձնային մանիպուլյացիաները, հակասոցիալական վարքը, ցոփ ու շվայտ կյանք վարելը[21]: Չնայած այս հատ-

---

[15] Տե՛ս **McHoskey J.W., Worzel W., Szyarto C.** Machiavellianism and psychopathy // Journal of Personality and Social Psychology. Vol. 74, Is. 1, 1998, էջ 192-210: DOI:10.1037/0022-3514.74.1.192:

[16] Տե՛ս **Paulhus D., Williams K.** The dark triad of personality: narcissism, Machiavellianism and psychopathy. Journal of Research in personality, 36, 2002, էջ 556-563:

[17] Տե՛ս **Furnham A., Richards S., Paulhus D.** The dark triad of personality: A 10 year review. Social and Personality Psychology Compass, 7(3), 2013, էջ 199-216: http://dx.doi.org/10.1111/spc3.12018

[18] Տե՛ս **Jakobwitz S., Egan V.** The dark triad and normal personality traits. Personality and Individual Differences, 40(2), 2006, էջ 331-339: http://dx.doi.org/10.1016/j.paid.2005.07.006

[19] Տե՛ս **Levenson M.** Rethinking psychopathy. Theory & Psychology, 2(1), 1992, էջ 51-71: http://dx.doi.org/10.1177/0959354392021003

[20] Տե՛ս **Jakobwitz S., Egan V,** նշվ. աշխ., էջ 331-339:

[21] Տե՛ս **Rauthmann J., Kolar G.** How "dark" are the Dark Triad traits? Examining the perceived darkness of narcissism, Machiavellianism, and psychopathy. Personality and Individual

կություններին ու այն բանին, որ ցուցաբերում են ապակառուցողական վարք իրենք իրենց և մյուսների նկատմամբ, նրանք կարող են լավ կատարել կարճաժամկետ աշխատանքները:

Նարցիսիզմի գաղափարը սկիզբ է առնում հոգեվերլուծական ուղղությունից և դիտարկվում է որպես պաթոլոգիական ինքնասիրահարվածություն, որը փոքր տարիքում արտահայտվում է ինքն իրենով տարվածությամբ, իսկ ավելի մեծ տարիքում՝ հայտնի լինելու մոլուցքով[22]: Նարցիսիզմի ուսումնասիրությունների տեղափոխումը կլինիկական դաշտից դեպի մինչախտանիշային տեղի ունեցավ, երբ լույս տեսավ Ռ. Ռասկինի և Ք. Հալի «Նարցիստիկ անձի ուսումնասիրում» (անգլ.՝ Narcissistic Personality Inventory կամ NPI) հոդվածը, որտեղ այդպիսի անձին տրվում էին գերազանցության, մյուսներից վեր լինելու բնութագրիչներ[23]: Նարցիստները չափից ավելի են գնահատում և գերագնահատում իրենց ես-ը՝ նսեմացնելով մյուսներինը: Նրանց բնորոշ է սնափառությունը, ինքն իրենով ու իր արարքներով կլանված լինելը, մեծամտությունը: Երբեմն նրանց վարքում դրսևորվում են դրական հատկություններ, ինչպիսիք են առաջնորդությունը, բարձր կարգավիճակի ձգտելը, կարճաժամկետ հայտնիությունը և համագործակցությունը: Ամեն դեպքում այս դրական կողմերը զուգակցվում են բացասականով, օրինակ՝ խոցելիությամբ, քիչ սկզբունքայնությամբ, երկարատև հարաբերություններ հաստատելու ունակ չլինելով[24]:

Մաքիավելիզմը, ի տարբերություն փսիխոպաթիայի ու նարցիսիզմի, երբևիցե չի դիտարկվել որպես հոգեկան կամ անձնային շեղում, պաթոլոգիա: Այս եզրույթը կոչվել է փիլիսոփա Նիկոլո Մաքիավելիի անունով և նկարագրում է մարդկանց, որոնք միջանձնային հարաբերություններում հակված են մանիպուլյացիաների, իրենց նպատակներին հասնելու համար պատրաստ են ամեն ինչի, նորմալ են համարում դիմացինին խաբելն ու սեփական նպատակին ծառայեցնելը[25]: Ռ. Կրիստին և Ֆ. Գրեյսը ստեղծել են MACH-IV հարցարանը, որը համարվում է մաքիավելիզմի արտահայտվածությունը բացահայտելու հիմնական գործիքներից մեկը[26]: Մաքիավելիստներին բնորոշ է սառը, ցինիկ և պրագմատիկ մտածողությունը, բարոյական նորմերին չհետևելը, խարդախությունը, նենգությունը և դիմացինին շահագործելու ձգտու-

---

Differences, 53(7), 2012, էջ 884-889: http://dx.doi.org/10.1016/j.paid.2012.06.020

[22] Տե՛ս edited by **Sandler J., Person E., Fonagy P.** for the International Psychoanalytical Association. Freud's "On Narcissism--an Introduction". New Haven Yale University Press, 1991, էջ 3-32:

[23] Տե՛ս **Raskin R., Hall C.** Narcissistic Personality Inventory. Psychological Reports, 45, 1979:

[24] Տե՛ս **Rauthmann J., Kolar G.**, նշվ. աշխ., էջ 884-889:

[25] Տե՛ս **McHoskey J., Worzel W., Szyarto C.,** նշվ. աշխ., էջ 192-210:

[26] Տե՛ս **Christie R., Geis F.** Studies in Machiavellianism. New York: Academic Press, 1970, էջ 10-34:

մը։ Նրանք կարողանում են երկարատև ու ստրատեգիկ պլանավորել իրենց գործողությունները։ Իշխանությունը և փողը այն հիմնական դրդապատճառներն են, որոնք նման մարդկանց մղում են գործունեության։ Մաքիավելիստների բնութագրերից են նաև ճարպկությունը, ճարտարությունը, իշխանության ձգտումը, աշխատանքում ներքին դրդապատճառների պակասը, որոնք միջանձնային հարաբերություններում անտանելի են դարձնում նրանց, սակայն հնարավորություն են տալիս լինելու առաջնորդ ու ղեկավար[27]։

Հոդվածի նպատակն է պարզել փոխկապակցվածությունը «Մեծ հնգյակի» և «Մութ եռյակի» գործոնների։

Հետազոտությանը մասնակցել են տարբեր բուհերի 266 ուսանողներ. 44,7 %-ը՝ տղամարդ, իսկ 55,3 %-ը՝ կին ($M_{տարիք}$=19.26, $StDev_{տարիք}$=1,346)։ Հետազոտության բոլոր մասնակիցները լրացրել են ստանդարտացված հարցաթերթ։ «Մութ եռյակի» գործոնները չափվել են «Մութ եռյակ, կեղտոտ դյուժին» (անգլ.՝ Dark Triad Dirty Dozen) հարցաթերթի միջոցով[28]։ Այն բաղկացած է 12 պնդումներից, որոնց հետազոտվողը պետք է տա իր համաձայնության աստիճանը՝ գնահատելով 1 (ընդհանրապես համաձայն չեմ) - 7 (միանշանակ համաձայն եմ) միավորանոց սանդղակով։ Մեթոդիկայի հիմնական սանդղակներն են մաքիավելիզմը, փսիխոպաթիան և նարցիսիզմը։ Անձնային հինգ հիմնական գործոնները չափվել են «Մեծ հնգյակ» հարցարանի կարճ տարբերակով[29]։ Այն բաղկացած է 15 պնդումներից, որոնք հետազոտվողը պետք է գնահատի 1-7 միավորանոց սանդղակով՝ տալով իր համաձայնության աստիճանը (ընդհանրապես համաձայն չեմ – միանշանակ համաձայն եմ)։ Հարցարանի հիմնական սանդղակներն են՝ նեյրոտիզմը, էքստրավերտությունը, լայնախոհությունը, բարյացակամությունը, բարեխղճությունը[30]։

Վիճակագրական վերլուծությամբ հաշվվել են օգտագործված երկու մեթոդիկաների սանդղակներից յուրաքանչյուրի միջին արդյունքները, ստանդարտ շեղումները և Կրոնբախի ալֆան (տե՛ս աղյուսակ 1)։

«Մեծ հնգյակի» համար Կրոնբախի ալֆայի ցուցանիշները ցածր է ստացվել, որի պատճառը, մեր կարծիքով, այն է, որ յուրաքանչյուր սանդղակի համար հարցերը ընդամենը երեքն են[31]։

---

[27] Տե՛ս **Rauthmann J., Kolar G.,** նշվ. աշխ., էջ 884-889։

[28] Տե՛ս **Jonason P., Webster G.** The dirty dozen: A concise measure of the dark triad. Psychological Assessment, 22(2), 2010, էջ 420-432: http://dx.doi.org/10.1037/a0019265

[29] Տե՛ս **Lang F., John D., Lüdtke O., Schupp J., Wagner G.** Short assessment of the Big Five: robust across survey methods except telephone interviewing. Behavior Research Methods, 43(2), 2011, էջ 548–567: doi:10.3758/s13428-011-0066-z

[30] Տվյալները հավաքագրվել են "Narcissism and self-esteem in cross-cultural perspective project" (leaders of project: Magdalena Żemojtel-Piotrowska, Jochen Gebauer, Jarosław Piotrowski) միջմշակութային հետազոտության արդյունքում, որն իրականացվել է «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիայի ջանքերով։

[31] Տե՛ս **Osborne J.** Best Practices in Exploratory Factor Analysis., 2014, էջ 104-119։

Աղյուսակ 1

«Մութ եռյակի» և «Մեծ հնգյակի» հիմնական սանդղակների նկարագրողական վիճակագրության արդյունքները

	Միջին (M)	Ստանդարտ շեղում (StDev)	Կրոնբախի ալֆա (Kronbach's α)
Մութ եռյակ			
Նարցիսիզմ	4,3	1,602	0,813
Փսիխոպաթիա	2,8	1,598	0,526
Մաքիավելիզմ	3,3	1,621	0,800
Մեծ հնգյակ			
Նեյրոտիզմ	4,7	1,460	0,142
Էքստրավերտություն	4,3	1,327	0,191
Լայնախոհություն	5,1	1,322	0,550
Բարյացակամություն	4,8	1,264	0,073
Բարեխղճություն	4,6	1,215	0,296

Հասկանալու համար հարցարանի միջոցով դուրս են բերվում հինգ հիմնական սանդղակները, թե դուրս չեն բերվում, կատարվել է գործոնային վերլուծություն, որպես մեթոդ ընտրվել է հիմնական բաղադրիչների վերլուծությունը (անգլ.՝ PCA), իսկ պտտման տեսակը (անգլ.՝ rotation method)՝ վարիմաքս (անգլ.՝ varimax)։ Ստացված մոդելը բացատրում է ամբողջի ցրվածության 57 %-ը, Կայզեր-Մայեր-Օլկինի գործակիցը հավասար է 0,615-ի, որը համարվում է ընդունելի, Բարտլետի գործակցի նշանակալիության աստիճանը փոքր է 0,05-ից[32]։ Գործոնային վերլուծությամբ պարզվել են անձնային հիմնական գծերին համապատասխանող հինգ գործոններ։ Այդ գործոնները կազմող հարցերի գործոնային կշիռները (անգլ.՝ factor loading) ստացվել են 0,6-ից բարձր։ Գործոնային վերլուծության արդյունքները հիմք են՝ հետագա վերլուծության մեջ կիրառելու անձնային գծերի հարցարանից ստացված արդյունքները՝ չնայած Կրոնբախի ալֆայի ցածր ցուցանիշին[33]։

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, հետազոտական ընտրանքում «Մութ եռյակի» գործոններից առավել արտահայտված է նարցիսիզմը, որը դրսևորվում է սեփական անձի նկատմամբ մեծ սիրով և ուշադրության ցանկությամբ։ «Մեծ հնգյակի» գործոններից համեմատաբար արտահայտված է լայնախոհությունը, որին բնորոշ են վառ երևակայությունը, ճանաչողական հետաքրքրասիրությունը, գեղեցիկի գնահատումը։

Հետաքրքիր է՝ վերոնշյալ գծերից յուրաքանչյուրի արտահայտվա-

[32] Տե՛ս **Williams B., Brown T., Onsman A**. Exploratory factor analysis: A five-step guide for novices. Australasian Journal of Paramedicine, 8(3), 2010, էջ 4-6։

[33] Տե՛ս նույն տեղը, էջ 7-13։

ծության աստիճանը տարբերվո՞ւմ է արդյոք կանանց ու տղամարդկանց համար: Այդ նպատակով հաշվարկվել են Ստյուդենտի t թեստի գործակիցները անկախ խմբերի համար: Արդյունքները ներկայացված են *աղյուսակ 2*-ում:

Աղյուսակ 2

«Մութ եռյակի» և «Մեծ հնգյակի» հիմնական սանդղակների նկարագրողական վիճակագրության և Ստյուդենտի t թեստի արդյունքները կանանց ու տղամարդկանց համար

		M	StDev	t	Syg[ᵛ]
Մութ եռյակ					
Նարցիսիզմ	*ար.*	4.2	1.548	-0.800	0.424
	իգ.	4.4	1.640		
Փսիխոպաթիա	*ար.*	3.4	1.873	4.803**	0.001
	իգ.	2.4	1.238		
Մաքիավելիզմ	*ար.*	3.6	1.734	2.277**	0.024
	իգ.	3.1	1.501		
Մեծ հնգյակ					
Նեյրոտիզմ	*ար.*	**4.4**	**1.507**	-2.552**	0.011
	իգ.	**4.9**	**1.405**		
Էքստրավերտություն	*ար.*	**4.1**	**1.283**	-2.033*	0.043
	իգ.	**4.4**	**1.336**		
Լայնախոհություն	*ար.*	**4.8**	**1.444**	-3.0.29**	0.003
	իգ.	**5.4**	**1.180**		
Բարյացակամություն	*ար.*	**4.6**	**1.330**	-1.987*	0.048
	իգ.	**4.9**	**1.208**		
Բարեխղճություն	*ար.*	**4.3**	**1.326**	-3.112**	0.002
	իգ.	**4.8**	**1.101**		

ᵛ M-միջին արժեք, t-թի թեստի արժեք, StDev-ստանդարտ շեղում, Syg-նշանակալիության աստիճան, * $p<0.05$, ** $p<0.01$

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, 0,01 նշանակալիության աստիճանով կանայք ու տղամարդիկ «Մութ եռյակի» գործոններից տարբերվում են փսիխոպաթիայի ու մաքիավելիզմի արտահայտվածության աստիճանով, իսկ «Մեծ հնգյակի» գործոններից՝ նեյրոտիզմի, լայնախոհության ու բարեխղճության: Ընդ որում՝ տղամարդկանց բնորոշ է «Մութ եռյակի» գործոնների համեմատաբար բարձր արտահայտվածություն, իսկ կանանց՝ «Մեծ հնգյակի»:

Հետագա վերլուծությամբ փորձ է արվում բացահայտելու մաքիավելիզմի, նարցիսիզմի և փսիխոպատիայի պայմանավորվածությունը անձնային գծերով: Այդ նպատակով կիրառվել է գծային ռեգրեսիոն վերլուծության մեթոդը[34]: Արդյունքները ներկայացված են *աղյուսակ 3*-ում:

[34] Տե՛ս **Howitt D., Cramer D.** An introduction to statistics in psychology. Harlow, England: Prentice Hall, 2011, էջ 380-393:

Գծային ռեգրեսիոն վերլուծության մեջ որպես անկախ փոփոխականներ են դիտարկվել նաև «Մութ եռյակի» գծերը: Այս մոդելը համարվում է անձի ուսումնասիրման նոր մոտեցումներից մեկը, և դեռ շարունակվում են հետազոտությունները՝ բացահայտելու դրա առանձնահատկությունները[35]: Կատարված հետազոտությունների մի մասի արդյունքները ցույց են տալիս, որ մաքիավելիզմը, փսիխոպաթիան ու նարցիսիզմը միմյանցից անկախ չեն, սակայն թե ինչպես են փոխկապակցված, լիովին բացահայտված չէ[36]: Սա է պատճառը, որ ռեգրեսիոն վերլուծության մեջ, բացի «Մեծ հնգյակի» գործոններից, որպես անկախ փոփոխականներ ներառվել են նաև «Մութ եռյակի» գծերը:

Աղյուսակ 3

«Մութ եռյակի» և «Մեծ հնգյակի» գործոնների միջև գծային ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

	Կախյալ փոփոխականներ		
Անկախ փոփոխականներ	Նարցիսիզմ	Փսիխոպաթիա	Մաքիավելիզմ
Նեյրոտիզմ	0.125**	-0.154***	
Էքստրավերտություն	0.159**		
Լայնախոհություն	0.136**		
Բարյացակամություն		-0.247***	-0.170**
Բարեխղճություն			
Նարցիսիզմ			0.418***
Փսիխոպաթիա			0.351***
Մաքիավելիզմ	0.468***	0.436***	
R^2	0.312	0.283	0.416
F change	4.377**	7.003***	6.416**

* p<0.05, ** p<0.01, *** p<0.001

Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ մի կողմից՝ մաքիավելիզմի համար դրական կանխորոշիչ գործոններ են նարցիսիզմը (B=0.418, p<0.001) ու փսիխոպաթիան (B=0.351, p<0.001), մյուս կողմից՝ մաքիավելիզմն է կանխորոշում փսիխոպաթիայի (B=0.436, p<0.001) ու նարցիսիզմի (B=0.468, p<0.001) արտահայտվածության աստիճանը: Սա խոսում է այն մասին, որ «Մութ եռյակի» մոդելում մաքիավելիզմն ունի ամենամեծ կշիռն ու դերը, իսկ նարցիսիզմն ու փսիխոպաթիան միմյանցից համեմատաբար անկախ գործոններ են (տե՛ս նկարը):

---

[35] Տե՛ս **Jakobowitz S., Egan V.** (2006). The Dark Triad and normal personality traits. Personality and Individual Differences, 2006, էջ 331-339:

[36] Տե՛ս **Kornienko D., Дериш Ф**. Взаимосвязь свойств Темной триады и хронотипических предпочтений / The Dark triad and chronotype. Психологические исследования. 8. 2, 2015, էջ 23-25:

Նկար

«Մութ եռյակի» գործոնների ռեգրեսիոն վերլուծության արդյունքները



Ինչ վերաբերում է անձնային գծերին, ապա բարյացակամությունը բացասական կանխորոշիչ գործոն է փսիխոպաթիայի (B=-0.247, p<0.001) ու մաքիավելիզմի (B=-0.170, p<0.01) համար: Սա կարելի է բացատրել նրանով, որ բարյացակամության ցածր մակարդակ ունեցող անձանց բնորոշ է իրենց շահերը մյուսներից վեր դասելու, ուրիշներին անբարյացակամ վերաբերվելու, նպատակներին ամեն գնով հասնելու հատկությունները: Դրանք բնորոշ են նաև մաքիավելիզմի ու փսիխոպաթիայի արտահայտվածության բարձր մակարդակ ունեցող անձանց: Վերջիններիս բնորոշ են նաև հուզական կայունությունը, տնական որևէ բացասական կամ դրական հույզեր չունենալը: Սա էլ ցույց է տալիս նեյրոտիզմի բացասական կանխորոշիչ դերը փսիխոպաթիայի համար (B=-0.154, p<0.001): Անձնային գծերից նեյրոտիզմը (B=0.125, p<0.01), էքստրավերտությունը (B=0.159, p<0.01) և լայնախոհությունը (B=0.136, p<0.01) դրական կանխորոշիչ դեր ունեն նարցիսիզմի համար: Ավելացնենք նաև, որ նարցիստիկ անձանց բնորոշ են հուզականությունը և հուզական երկարատև ֆոնը, նրանք սիրում են լինել մարդկանց շրջապատում, որտեղ լիովին կարող են «ցուցադրել» իրենց ունակությունները, ակտիվ են, արկածախնդիր:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ անձնային գծերը որոշակի կանխորոշիչ դեր ունեն «Մութ եռյակի» գործոնների համար: Ընդ որում, անձնային գծերը համեմատաբար ավելի շատ են կանխորոշում նարցիսիզմի արտահայտվածությունը, քան փսիխոպաթիայի ու մաքիավելիզմի: Անձնային գծերից էքստրավերտությունն ու լայնախոհությունը կանխորոշում են միայն նարցիսիզմի արտահայտվածության աստիճանը, նեյրոտիզմը՝ նարցիսիզմի ու փսիխոպաթիայի, բարյացակամությունը՝ փսիխոպաթիայի ու մաքիավելիզմի: Հետաքրքրական է նաև այն, որ նարցիսիզմի համար և՛ անձնային գծերը, և՛ մաքիավելիզմը ունեն դրական կանխորոշիչ դեր: Ստացվում է, որ նարցիսիզմը լիովին բացասական գիծ չէ, ինչպես մյուս երկուսը, այլ ունի նաև դրական

դրսևորումներ, հատկապես միջանձնային հարաբերություններում, որտեղ փսիխոպաթիան ու մաքիավելիզմը արտահայտվում են բացասական կողմով: Սակայն այս ենթադրությունը կարիք ունի հետագա ուսումնասիրման: «Մութ եռյակի»՝ որպես անձի նկարագրման մոդելի դիտարկումից կարելի է եզրակացնել, որ փսիխոպաթիան ու նարցիսիզմը միմյանցից անկախ են, սակայն մաքիավելիզմը, կարելի է ասել, կենտրոնական գործոն է փսիխոպաթիայի ու նարցիսիզմի միջև: Կարծում ենք՝ «Մութ եռյակի» մոդելը կարիք ունի հետագա ավելի խորը ուսումնասիրման՝ հասկանալու համար նրա ամբողջական կառուցվածքում երեք գործոնների դերն ու տեղը:

Բանալի բառեր - *«Մեծ հնգյակ», «Մութ եռյակ», մաքիավելիզմ, փսիխոպաթիա, նարցիսիզմ, ռեգրեսիոն վերլուծություն*

АСТХИК СЕРОБЯН – *Проблема взаимосвязи личностных факторов в моделях изучения «большой пятёрки» и «тёмной триады».* – «Большая пятёрка» – самая распространённая модель классификации личностных черт. Тем не менее, она подвергается критике, потому что описывает позитивные аспекты личности, не касаясь негативной, тёмной, антиобщественной её стороны. Вот почему в наши дни быстро развивается модель «тёмной триады», отражающая негативные стороны человека. В статье речь идёт о чертах личности, включаемых в неё. Результаты анализа линейной регрессии показывают, что для макиавеллизма позитивными предикторами являются психопатия и нарциссизм, а негативным – доброжелательность. Для нарциссизма позитивны макиавеллизм, нейротизм, экстраверсия, открытость опыту. Нейротизм, доброжелательность и макиавеллизм суть предикторы для психопатии.

Ключевые слова: "*большая пятёрка", "тёмная триада", макиавеллизм, психопатия, нарциссизм, регрессионный анализ*

ASTGHIK SEROBYAN – *The Problem of the Relationship between Personal Factors in Personality Traits Models "Big Five" and "Black Triad".* – The Big Five is the most widely used model for the classification of personality traits. However, it is criticized because of describing the positive aspects of the personality, without embracing the negative, dark, antisocial aspects. That is why the Dark Triad model, which reflects the negative aspects of a person, is rapidly developing today. This article aims to examine the relationship between personality traits and the Dark Triad. Linear regression analysis is used. The results indicate that Psychopathy, Narcissism are positive predictors, and Agreeableness is a negative predictor for Machiavellianism. Also, Narcissism is positively predicted by Machiavellianism, Neuroticism, Extraversion, and Openness. Neuroticism, Agreeableness, and Machiavelism are negative predictors for Psychopathy.

Key words: "*Big Five", "Black Triad", Machiavellism, Psychopathy, Narcissism, linear regression analysis*

Ներկայացվել է՝ 16.10.2019
Գրախոսվել է՝ 21.10.2019
Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019